# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**2016թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում կայացած Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի նիստի**

Սույն թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի ունեցավ <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման>> միջգերատեսչական հանձնաժողովի նիստ:

**Նիստին մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Ա. Գրիգորյան | ՀՀ բնապահպանության նախարար<br>/հանձնաժողովի նախագահ/ |
| Ա. Մարտիրոսյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ |
| Ա. Եգանյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի արդյունաբերության քաղաքականության վարչության պետ |
| Ե. Տերտերյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետ |
| Ա. Հարությունյան | ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ |
| Կ. Կարապետյան | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության ԲՏՊ վարչության տեխնածին վթարների, հակաքիմիական և հակաճառագայթային պաշտպանության բաժնի պետ |
| Ս. Խաչատրյան | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ |
| Ա. Առուստամյան | ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության հիգիենայի բաժնի գլխավոր մասնագետ |
| Վ. Խաչատրյան | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության աշխատակից |
| Ի. Հակոբյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի քարտուղար/ |

Նիստին հրավիրված էին՝

<<Մետէքսիմ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչները՝
Դ. Հայրապետյան՝ տնօրեն
Դ. Կարապետյան՝ իրավաբան
Վ. Թևոսյան՝ փորձագետ

Հանձնաժողովի նիստը բացեց հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ բնապահպանության նախարար **պարոն Ա. Գրիգորյանը**՝ ներկայացնելով օրակարգի հարցը.

<<Մետէքսիմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա ստանալու մասին լրամշակված հայտի քննարկում:

**Պարոն Գրիգորյանը** հայտնեց, որ լիցենզավորման հանձնաժողովի նախորդ նիստին քննարկվել է <<Մետէքսիմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիցենզիա ստանալու մասին հայտի փաթեթը, որը պետք է լրամշակվեր կազմակերպության կողմից՝ հանձնաժողովի փորձաքննական եզրակացության հիման վրա:

Այդ կապակցությամբ <<Մետէքսիմ>> ՍՊԸ-ն ներկայացրել է պարզաբանումներ՝ միջգերատեսչական հանձնաժողովի անդամների հարցադրումների վերաբերյալ, ինչպես նաև Բանեցված թթվային մարտկոցների հավաքման, պահեստավորման և տեղափոխման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Նշված նյութերն ուսումնասիրման համար տրամադրվել են լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին:

Նիստի ընթացքում ներկաները նշեցին, որ կազմակերպությանը վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա տրամադրելու առնչությամբ առարկություններ չունեն:

**Պարոն Գրիգորյանը** ամփոփեց հարցի քննարկումն ու հանձնաժողովի անդամների հնչեցրած կարծիքները, ինչի արդյունքում որոշվեց տալ դրական փորձաքննական եզրակացություն՝ <<Մետէքսիմ>> ՍՊԸ-ի կողմից վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ:

Ա. Գրիգորյան
Ա. Մարտիրոսյան
Ա. Եգանյան
Ե. Տերտերյան
Ա. Հարությունյան
Կ. Կարապետյան
Ս. Խաչատրյան
Ա. Առուստամյան
Ա. Խաչատրյան
Դ. Հակոբյան